# «Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**__________ի 2019 թվականի N ______-Ն**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2002 ԹՎԱԿԱՆԻ**

**ՀՈՒԼԻՍԻ 25-Ի N 1392-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածով` Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի **«Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություններ» պետական հիմնարկները վերակազմակերպելու, «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությունը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 28-ի N 661 որոշման մեջ փոփոխություններ կատարելու և 1996 թվականի մայիսի 15-ի N 150 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»** N 1392-Ն որոշմամբ հաստատված հավելված **N** 3-ի`

- 33-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1-րդ ենթակետերով.

«13.1 խորհրդի յուրաքանչյուր նիստից հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում նիստի արձանագրությունը հրապարակում է դպրոցի

պաշտոնական կայքում.».

- 41-րդ կետում «առնվազն վեց անդամ» բառերը փոխարինել «առնվազն 7 անդամ» բառերով.
- 78-րդ կետում «երկու» բառը փոխարինել «երեք» բառով.
- 79-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1-րդ ենթակետով.

«1.1) դպրոցի տնօրենի պաշտոնի թափուր տեղի հավակնորդի ներկայացրած զարգացման ծրագիրը՝ կառավարության որոշմամբ սահմանված կարգով.».

- 80-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1-րդ ենթակետով.

«1.1) կառավարության որոշմամբ սահմանված կարգով դպրոցի տնօրենի պաշտոնի թափուր տեղի հավակնորդին հավանություն տալու.».

- 102-րդ կետի 1-ին ենթակետում «երկու» բառը փոխարինել «երեք» բառով.
- Հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1-րդ կետով.

«103.1. Կառավարության որոշմամբ սահմանված կարգով դպրոցի ծնողական խորհուրդը քննարկում է դպրոցի տնօրենի պաշտոնի թափուր տեղի հավակնորդի ներկայացրած զարգացման ծրագիրը և քվեարկությամբ որոշում դպրոցի տնօրենի պաշտոնի թափուր տեղի հավակնորդի իր թեկնածուին.»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: